ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017 թվականի դեկտեմբերի 3-6-ը Ստրասբուրգ (Ֆրանսիայի Հանրապետություն) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը**

   Վաչե Տերտերյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

   ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի առաջին տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

   Ստրասբուրգ (Ֆրանսիայի Հանրապետություն), 2017 թվականի դեկտեմբերի 3-6-ը

4. **Հրավիրող կողմը**

   ԵԽ Ժողովրդավարության գլխավոր տնօրինություն

5. **Գործուղման նպատակը**

   Մասնակցել ԵԽ ժողովրդավարության և կառավարման եվրոպական կոմիտեի (CE European Committee on Democracy and Governance – CDDG) 8-րդ նստաշրջանին

6. **Քննարկված թեմաները**

   Համաժողովին մասնակցում էին Եվրոպայի Խորհրդի անդամ երկրների կենտրոնական իշխանությունների ու տեղական իշխանությունների ներկայացուցիչները:

   Երկրների պատվիրակները ներկայացրեցին համագործակցության ներկա մակարդակի և գործակցության ընդլայնման հնարավորությունները:

   Համաժողովի ընթացքում ներկայացվեց վարչական և տեղական ինքնակառավարման բարեփոխումների փորձը, լավ ժողովրդավարական կառավարման և բարեփոխումների աջակցության գործիքները, նորարարական և լավ կառավարման ռազմավարությունը, ապակենտրոնացված համագործակցության և հանրային ծառայությունների ոլորտում

բարեփոխումների փորձը՝ մասնավորապես Ուկրաինայի օրինակով: Նիստի ընթացքում քննարկվեցին փորձի փոխանակման միջոցով ժողովրդավարական կառավարման խթանմանը, Նախարարների կոմիտեում նախագահության, ժողովրդավարության վերաբերյալ տեղեկատվության պատրաստմանը վերաբերող, ինչպես նաև մի շարք այլ օրակարգային հարցեր:

Տեղի ունեցավ նաև Ժողովրդավարության և կառավարման Եվրոպական հանձնաժողովի 2016-2017թթ. աշխատանքային ծրագրում տեղ գտած դրույթների իրականացման վերաբերյալ հաշվետվության ներկայացումը և 2017-2022թթ. ռազմավարության քննարկումը:

Անդրադարձ կատարվեց Չեխիայի Հանրապետության՝ ԵՄ-ի նախագահության ժամանակաշրջանում կատարված աշխատանքներին, և նոր նախագահող երկրի՝ Դանիայի անելիքներին:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Իմ ելույթում հանգամանորեն ներկայացրեցի Հայաստանում ընթացող վարչատարածքային, տեղական ինքնակառավարման ոլորտում բարեփոխումները՝ գնահատելով ԵՄ համապատասխան կառույցների կողմից ցուցաբերվող շարունակական օժանդակությունը բարեփոխումների ճանապարհին:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Նստաշրջանի ավարտին քննարկվեց CDDG-ի 8-րդ նստաշրջանի վերաբերյալ ընդլայնված զեկույցի նախագիծը:

9. Գործուղվողը

Վաչե Տերտերյան

10. Ստորագրությունը, ամսաթիվը

11.12.2017թ.